ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆՈՒՇԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՊԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XX ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹԹ.)

Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ **ՄԵԼՔՈՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **ՄԱՏԻՆՅԱՆ ԿԱՐԼԵՆ ՌԱՖԱՅԵԼԻ**

բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ **ՏՈՆԻԿՅԱՆ ՍՈՆԱ ԱԼԲԵՐՏԻ**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. նոյեմբերի 20-ին, ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. հոկտեմբերի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Մարգարյան Ս. Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է 1970-80-ական թթ. թուրքական արձակում քաղաքական վեպի զարգացման առանձնահատկությունների, մասնավորապես՝ «Մարտի 12-ի վեպի» և «Սեպտեմբերի 12-ի վեպի» յուրատեսակ գրական ուղղվածությունների ձևաբովանդակային ընդգրկումների ուսումնասիրությանը: Հիշյալ ժամանակահատվածում քաղաքական արձակի գերակայությունը բացատրվում է մի քանի հանգամանքով, որոնց մեջ կարևորվում է նախ այն, որ գրողներից շատերը քաղաքական պայքարի և հատկապես ձախակողմյան շարժումների ակտիվ մասնակիցներ էին, ովքեր անձամբ բռնությունների, խոշտանգումների ու հետապնդումների էին ենթարկվել, ուստի՝ ռեալիզմի դիրքերից պատկերեցին իրենց անձնական տրավմատիկ փորձը: Հետևաբար այս վեպերի մեծ մասն ունեն մի կողմից փաստագրական, մյուս կողմից, ինչ որ չափով, ինքնակենսագրական բնույթ, իսկ երբեմն նկատելի են հուշագրության ժանրի առանձնահատկությունները: Թուրքական քաղաքական ուղղվածության գրականության հիմնական թեմաներն են քաղաքական հետապնդումներն ու կալանքները, բանտարկությունները, համալսարանների և ակադեմիական այլ կառույցների վրա գործադրվող ճնշումը, ձախակողմյան կառույցների պայքարը, ներքին հաշվեհարդարները, քաղաքական գաղափարախոսությունների նկատմամբ հավատի կորուստը: Դրանք պատմում են նաև պետության և անհատի հարաբերությունների, քաղաքական դրդապատճառներով մեղադրվող անձանց դատավարությունների, նրանց նկատմամբ կիրառված խոշտանգումների, բանտային իրականության, ինչպես նաև արդեն անազատության պայմաններում քաղաքական բանավեճերի և գաղափարական առճակատումների մասին:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիշյալ ժամանակաշրջանի գրական ստեղծագործությունների և հատկապես հերոսների կերպարների ուսումնասիրությունը թույլ է տալիս հստակ պատկերացում կազմել գրական գործընթացի զարգացման օրինաչափությունների մասին, փաստել, որ պատմականությունը հետզհետե կարևոր օղակ է դառնում իրականության դիալեկտիկական ուսումնասիրության համար: Բացի այդ՝ քաղաքական վեպի՝ որպես մարդկային անհատականության և քաղաքականության փոխհարաբերությունների ստեղծագործության ուսումնասիրությունը ցույց է տալիս այդ ժամանակաշրջանի զանգվածային գիտակցության կաղապարաձևերը, մասնավորեցնում, թե ինչպիսի դեր ունի գրականությունը զանգվածային գիտակցության, հասարակական կարծիքի ձևավորման գործում: Այս արձակ ստեղծագործությունները, շնորհիվ իրենց փաստագրական բնույթի, հստակ պատկերացում են տալիս 1960-80-ական թթ. Թուրքիայի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի, գերակա գաղափարախոսությունների, թուրքական հասարակության արժեքային համակարգի ձևափոխությունների բազմաթիվ առանձնահատկությունների մասին,

ինչպես նաև վեր հանում պատմական իրողության նրբերանգներն ու դրանց ազդեցություններն անհատի վրա:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է քննել թուրքական արձակում քաղաքական վեպի զարգացման առանձնահատկությունները, ձևաբովանդակային ընդգրկումները: Դրա համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. համեմատական-տիպաբանական վերլուծության միջոցով ցույց տալ քաղաքական նույն իրողության արտացոլման ձևի ընդհանրություններն ու տարբերությունները
2. ներկայացնել գեղարվեստական գրականության մեջ քաղաքականության՝ որպես արտագեղագիտական երևույթի խնդրահարույց կողմերն ու անհրաժեշտությունը
3. իրականացնել առանձին վեպերի գաղափարական-կառուցվածքային, գեղագիտական առանձնահատկությունների վերլուծություն՝ ի հայտ բերելով այդ ստեղծագործությունների հեղինակների ստեղծագործական անհատականությունը՝ հասարակական-քաղաքական նույն իրողությունն արտացոլելիս
4. քննել քաղաքական վեպի ժանրի անկման պատճառները նախևառաջ թուրքական գրականության մեջ գրական նոր ուղղության՝ պոստմոդեռնիզմի հաստատման ու զարգացման համատեքստում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Սույն ատենախոսությունը հայկական գիտական շրջանակներում թուրքական քաղաքականացված արձակին նվիրված առաջին ուսումնասիրությունն է, որտեղ մանրամասն ներկայացվում են քաղաքական վեպի առաջացման և զարգացման նախադրյալներն ու հիմնական միտումները՝ դրանք դիտարկելով ինչպես ներքաղաքական իրադարձությունների, այնպես էլ համաշխարհային գրական գործընթացների անխուսափելի ազդեցությունների համատեքստում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Ատենախոսությունը գրված է գրականության պատմության արդի մեթոդների և տեսական սկզբունքների կիրառության հիման վրա:

Առաջնորդվել ենք համաժամանակյա և տարժամանակյա տիպաբանական համադրական սկզբունքներով՝ փորձելով վեր հանել ուսումնասիրվող նյութի պատճառահետևանքային կապերը, խորքային առնչությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ արծարծված հիմնական խնդիրները, կարևոր դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են ՀՀ տարբեր պարբերականներում և ժողովածուներում: Աշխատանքի առանձին դրույթներ կարող են օգտակար լինել բարձրագույն կրթական հաստատություններում՝ թուրքական գրականության պատմության դասավանդման և հայ իրականության մեջ առաջին անգամ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնում ստեղծվող «Թուրք գրականության բուհական դասագրքի» համապատասխան հատորի կազմման աշխատանքների համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ընդլայնված նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, ինչպես նաև հանրապետական գիտաժողովներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրական սահմանները 1960-80-ականներն են և այդ ընտրությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ հիշյալ շրջանը բնորոշվում է որպես «Թուրքիայում սոցիալիստական գաղափարախոսության տարածման», ինչպես նաև ներքաղաքական բուռն խմորումների, ռազմական հեղաշրջումների ժամանակաշրջան: Այն համարվում է նաև թուրքական քաղաքական վեպի զարգացման գագաթնակետը, երբ գաղափարախոսական-քաղաքական պայքարի ազդեցությամբ և մասնավորապես 1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտությամբ գրականության մեջ հիմնավորվեցին «Մարտի 12-ի վեպի», իսկ 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո՝ «Սեպտեմբերի 12-ի վեպի» յուրատեսակ գրական ուղղվածությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության շրջանակներում թուրքական քաղաքական վեպի ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել թուրքերեն աղբյուրները՝ փաստագեղարվեստական ստեղծագործությունները, ինչպես նաև հայերեն, ռուսերեն անգլերեն և թուրքերեն աշխատությունները, հետազոտություններն ու հրապարակումները:

«Մարտի 12-ի վեպի» գրական ուղղվածության ուսումնասիրություն է կատարել խորհրդային գրականագետ Ս. Ուտուրգաուրին[1]: Նա ժամանակի քաղաքականացված գրականության հոսքից առանձնացնում է քաղաքական վեպի ժանրի 3 տարատեսակ՝ կարևորելով հատկապես սուբյեկտիվ-հոգեբանական քաղաքական վեպերը: Ս. Ուտուրգաուրին նման վեպերի գեղարվեստական առանձնահատկություն է համարում այն, որ դրանք փորձում են բացահայտել անհատի և հասարակական-քաղաքական իրադարձությունների միջև եղած կապը:

Թուրք գրականագետ Բ. Մորանը[2] «Մարտի 12-ի վեպերի» ուսումնասիրությունն իրականացնում է նախորդ տասնամյակի «անատոլական» կամ «գյուղական վեպերի» հետ համեմատությունների միջոցով: Նա նշում է, որ 70-ական թթ. գրականությունն իր ձևաբովանդակային ընդգրկումներով լիովին տարբերվում էր հիշյալ վեպերից: Բովանդակային տարբերությունների առումով «Մարտի 12-ի վեպերում» առավել հաճախ պետության և անհատի հարաբերություններն են, իսկ ձևով՝ դրանք չափազանց ռեալիստական են: Բ. Մորանը շեշտում է, որ «Մարտի 12-ի վեպերը» նոր էին, հետաքրքիր այն պատճառով, որ դրանք ընթերցողի համար բացահայտում էին իրեն լիովին անծանոթ աշխարհը՝ ծերբակալված հեղափոխական հերոսի միջոցով նկարագրելով ոստիկանատները, բանտերն ու խոշտանգումները: Հեղինակների այս ձախողման, ինչպես նաև բանտ-խոշտանգումների տեսարանների գերակայության քննադատությամբ է հանդես եկել նաև գրականագետ Օ. Թյուրքեշը՝ «Մարտի 12-ի» գրականությունը բնորոշելով որպես հեղափոխական երիտասարդության մահախոսական[3]: Մինչդեռ գրաքննադատ Չ. Գյունայ-Էրքոլը[4], մերժելով այս գրականության նկատմամբ այդպիսի դիրքորոշումը, ընդգծում է, որ այն իրադարձությունների կայուն արտացոլում չէր, այլ ակտիվ բեկում էր Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, քանի որ այս վեպերի հերոսներն ընդօրինակելի կերպարներ էին բազմաթիվ մարդկանց համար:

Թուրքական քաղաքական վեպերի առաջին ուսումնասիրողներից է նաև թուրք հայտնի գրաքննադատ Մ. Բելգեն[5], ով ևս ենթարկվել է «Մարտի 12-ի» վարչակարգի բռնություններին: Նա, ուսումնասիրելով այս ժա-

---

[1] Утургаури С., Турецкая проза 60-70-х годов: основные тенденции развития, Москва, 1982, նույնի Современный турецкий политический роман, Литература стран зарубежного Востока 70-х годов, Реализм на новом этапе, Москва, 1982, стр. 77-98.

[2] Moran B., Türk Romanına Eleştirel Bir Bakış, III cilt, İstanbul, 2005.

[3] Türkeş Ö., "Sol"un Romanı, Modern Türkiyede Siyasi Düşüce, Cilt 8, İstanbul, 2. Baskı, 2008, նույնի Romanda 12 Mart suretleri ve '68 kuşağı, «Birikim» Aylık Sosyalist Kültür Dergisi 132, İstanbul, 2000.

[4] Günay-Erkol Ç., Cold War Masculinities in Turkish Literature: a Survey of March12 Novels, Leiden University, 2008, նույնի 12 Mart'ta Aşkın Sağı Solu: Yarın Yarın ve Sancıda Eril Bakış, Kültür ve Siyasette Feminist Yaklaşımlar, Sayı 5, 2008, նույնի Issues of Ideology and Identity in Turkish Literature during the Cold War, Turkey in the Cold War: Ideology and Culture, Palgrave Macmillan, 2013.

[5] Belge M., Edebiyat Üstüne Yazılar, İstanbul, 4. Baskı, 2012, նույնի 12 Yıl Sonra 12 Eylül, İstanbul, 1. Baskı, 1992.

մանակաշրջանի գրականության մեջ խոշտանգումների, բռնությունների տեսարանների գերակայությունը, պարզաբանում է, թե ինչպես է այդ կենտրոնացումը տեղավորվել հասարակության ընկալման մեջ: Արդյունքում Մ. Բելգեն եթե «Մարտի 12-ի վեպերը» դիտարկում է որպես հեղափոխական երիտասարդների անմեղությունը հաստատելու միտում, ապա քաղաքական վեպերի երկրորդ ալիքը՝ «Սեպտեմբերի 12-ը» և մասնավորապես «Բանտային գրականությունը» հակամարտության կոչ է համարում:

«Սեպտեմբերի 12-ի» վեպերի ուսումնասիրությանն է նվիրված Մ. Օզգերի «Սեպտեմբերի 12-ը թուրքական վեպում»[6] աշխատությունը: Հեղինակը, նախ ընդհանուր գծերով ներկայացնելով թուրքական քաղաքական վեպի զարգացումը, քննում է հեղափոխության ազդեցությամբ գաղափարախոսության և մշակութային հիշողությունների կրած վնասների արտացոլումը գրականության մեջ:

Ատենախոսության մեջ քաղաքական վեպի թեմատիկ շրջանակը, առանձին գրողների ստեղծագործական առանձնահատկություններն ուսումնասիրելու համար կարևորվել են նաև թուրք հայտնի գրաքննադատ Ֆ. Նաջիի երեք մենագրությունները[7], որոնցում հեղինակը թուրքական վեպի զարգացումը դիտարկում է հասարակական փոփոխությունների համատեքստում, գրականագետներ Մ. Թուրանի[8], Ա. Ալվերի[9] և այլոց աշխատություններն ու հոդվածները:

Թուրքական գրականության պատմության մեջ առհասարակ վեպի և մասնավորապես քաղաքական վեպի ժանրի ծագումնաբանությունը, ժանրային-ձևաբանական մոդելները, մոդիֆիկացիաներն ուսումնասիրելու համար կարևորվել են ռուս արևելագետներ Ն. Այզենշտեյնի[10], Հ. Կյա-

---

[6] Özger M., Türk Romanı'nda 12 Eylül, İstanbul, 1, Basim, 2012.

[7] Naci F., 100 Soruda Türkiye'de Roman ve Toplumsal Değişme, İstanbul, 1990, նույնի Türk Romanında Ölçüt Sorunu, Eleştiri Gülüğü I (1980-1986), İstanbul, 2002, նույնի Yüz Yılın 100 Türk Romanı, İstanbul, 2010.

[8] Turan M., Türk Romanında 12 Mart, Edebiyat Sosolojisi Açısından Bir İnceleme, İstanbul, 2009.

[9] Alver A., 12 Mart Romanı Bir Düğün Gecesi'nde Ayşen Karakterinin Yabancılaşması, Uluslararası Sosyal Araştırmalar Dergisi, Cilt 4, Sayı 16, 2011, նույնի The Ideology of Westernization and the Failure of the Turkish Intellectual in the March Twelfth Novels, Uluslararası Sosyal Araştırmalar Dergisi, Cilt: 4, Sayı: 17, 2011, նույնի Cultural Memory of the 1970s Turkey: The Psychological Effects of State Opression on the Imprisoned Individual in the Martch 12th Novel "Büyük Gözaltı", Turkish Studies-International Periodical For the Languages, Literature and History of Turkish or Turkic, Vol. 7/3, Ankara, 2012, նույնի 12 Mart Romanlarında Kadın Tanımlamaları, Turkish Studies - International Periodical for the Languages, Literature and History of Turkish or Turkic Volume 7/4, Ankara, 2012, նույնի Postmodern Responses to the September 12th 1980 Military Coup D'état in Turkish Literature, Türk Dili ve Edebiyatı Dergisi, Cilt/Sayı: XLVIII, 2013, նույնի Türk Edebiyatında Unutulan Sesler: 12 Eylül 1980 Askeri Darbe Sonrası Türkiye'de Yazılan Hapishane Edebiyatı'na Analitik Bakış Turkish Studies - International Periodical For The Languages, Literature and History of Turkish or Turkic, Volume 8/9, Ankara , 2013.

[10] Айзенштейн Н., Из истории турецкого реализма, заметки о турецкой прозе (70-е годы XIX в.-30-е годы XX в.), Москва, 1968.

միլևի[11], Լ. Ալկանայի[12], Ա. Բաբանի[13], Մ. Ռեպենկովայի[14] աշխատությունները:

Թուրքական գրականության զարգացման առանձնահատկություններ-ի մասին համապարփակ տեղեկություններ են տալիս նաև թուրք գրականագետներ Շ. Քուրդաքուլի «Ժամանակակից թուրք գրականությունը»[15] քառահատորը, Բ. Էրջիլասունի «Թուրքական նոր գրականության ուսումնասիրություն»[16] երկհատորյակը, Գ. Այթաչի «Ժամանակակից թուրքական վեպերի ուսումնասիրություն»[17], Գ. Այթաշի «Թեմատիկ վեպերի ուսումնասիրություն. կյանքն արտացոլող վեպեր»[18] և Ֆ. Անդրի «Վեպ և կյանք»[19] մենագրությունները: Որոշակի ժամանակաշրջանում թուրքական գրականության մեջ գերակա ուղղությունների, թեմատիկ ընդգրկումների, կյանքի ռեալիստական պատկերման ձևերի գնահատման համար կարևորվել են թուրք գրականագետներ Ք. Կարպատի[20], Ա. Յալչընի[21], Թ. Հալմանի[22], ինչպես նաև հայ ուսումնասիրողներ Ռ. Մելքոնյանի[23], Ս. Գալշոյանի[24], Է. Խաչատրյանի[25] աշխատություններն ու հոդվածները:

Թուրքիայի Հանրապետության պատմության 1960-80-ական թթ. ժամանակաշրջանի վերաբերյալ պատմագիտական հիմք են հանդիսացել

---

[11] Кямилев Х., У истоков современной турецкой литературы, (турецкие писатели-просветители второй половины XIX в.), Москва, 1967, 132.

[12] Алькаева Л., Очерки по истории турецкой литературы 1908-1939 гг., Москва, 1959, նույնի Сюжеты и герои в турецком романе (конец XIX- начало XX века), Москва, 1966, նույնի Из истории турецкого романа 20-50-е годы XX века, Москва, 1975,.

[13] Бабаев А., Очерки современной турецкой литературы, Москва, 1959.

[14] Репенкова М., От реализма к постмодернизму, Москва, 2008, նույնի Вращающиеся зеркала: Постмодернизм в литературе Турции, Москва, 2010.

[15] Kurdakul Ş., Çağdaş Türk Edebiyatı, İstanbul, 1994, c. 1-4.

[16] Ercilasun B., Yeni Türk Edebiyat Üzerine İncelemeler, Cilt 1-2, Ankara, 1. Baskı, 1997.

[17] Aytaç G., Çağdaş Türk Romanları Üzerine İncelemeler, Ankara, 1990.

[18] Aytaş G., Tematik Roman İncelemeleri, Hayata Ayna Tutan Romanlar, Ankara, 1. Baskı, 2008.

[19] Andı F., Roman ve Hayat, İstanbul, 2010.

[20] Karpat K., Çağdaş Türk Edebiyatında Sosyal Konular, İstanbul, 1962.

[21] Yalçın A., Siyasal ve Sosyal Değişmeler Açısından Cumhuriyet Dönemi Çağdaş Türk Romanı 1946-2000, Ankara, 2. Baskı, 2005.

[22] Halman T., Turkish Literature in the 1960s, Rapture and Revolution: Essays on Turkish Literature, New York, 2007.

[23] Մելքոնյան Ռ., Թուրք գրող Ֆաքիր Բայքուրթը (գրական դիմանկարի փորձ), «Նորդար», թիվ 4, Երևան, 2004, էջ 117-124, նույնի Հակաամերիկյան տրամադրությունների արտացոլումը թուրք գրող Ֆաքիր Բայքուրթի «Ամերիկյան վիրակապը» վեպում, Մերձավոր Արևելք II, Երևան, «Զանգակ-97», 2005, էջ 147-151, նույնի «Գյուղական ինստիտուտները» և գրական կյանքը Թուրքիայում (1940-50-ական թթ.), Կանթեղ, Երևան, 2005, թիվ 1 (22), էջ 139-144:

[24] Գալշոյան Ս., Դասակարգերի փոխհարաբերության խնդիրը Յաշար Քեմալի «Թիթեղը» վիպակում, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու) VII, Երևան, 2012, էջ 342-362:

[25] Խաչատրյան Է., Օրհան Քեմալ. գրական դիմանկարի փորձ, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու) VII, Երևան, 2012, էջ 363-370:

հայ[26], թուրք[27], ռուս[28] և արևմտյան[29] մի շարք հեղինակների հոդվածներն ու աշխատությունները:

Ատենախոսության համար տեսական գրականագիտական հիմք են հանդիսացել էդ. Ջրբաշյանի[30], խորհրդային գրականագետներ Մ. Բախտինի[31], Գ. Պոսպելովի[32], Ն. Ուտեխինի[33] և այլոց, քաղաքական վեպի արևմտյան տեսաբաններ Ի. Հոուի[34], Ռ. Բոյերսի[35], Ս. Շչեինգոլդի[36] ուսումնասիրությունները:

Թուրքական քաղաքական վեպերի տիպաբանական առանձնահատկություններն ուսումնասիրվել են էրդալ Օզի «Վիրավոր ես», Մեհմեդ Էրօղլուի «Մենության մեջ», Ադալեթ Աղաօղլուի «Հարսանիքի գիշեր» և Օրհան Փամուքի «Լռին տունը» ստեղծագործությունների քննական վերլուծությունների միջոցով: Հիշյալ ստեղծագործությունների առանձնացումը հիմնավորվում է մի քանի հանգամանքով. նախ՝ այս ստեղծագործությունների հեղինակները, բացառությամբ Օրհան Փամուքի, քաղաքական պայքարի ակտիվ մասնակիցներ են եղել և անձամբ զգացել ժամանակի վարչակարգի ողջ դաժանությունը: Հետևաբար այս ստեղծագործություններն, ունենալով ինքնակենսագրական բնույթ, բարձր գեղար-

---

[26] Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001 թթ.), Երևան, 2008, Դումանյան Ա., Թուրքիայի 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ, Մերձավոր Արևելք III, Երևան, 2006, էջ 51-55, նույնի Աջակողմյան ծայրահեղականների ահաբեկչությունը Թուրքիայում 1980 թվականի ռազմական հեղաշրջման նախօրեին, Մերձավոր Արևելք II, Երևան, 2005, էջ 84-87, Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ., Դումանյան Ա., Տեր-Մաթևոսյան Վ., Հովհաննիսյան Ա., Չաքրյան Հ., Թուրքիայի Հանրապետության պատմություն, բուհական դասագիրք, Երևան, 2014:

[27] Müftüoğlu O., 1960'lardan 1980'e Türkiye Gerçeği, İstanbul, 1989, Zürcher E., Modernleşen Türkiye'nin Tarihi, İstanbul, 7. Baskı, 2000, Kabacalı A., Türkiye'de Gençlik Hareketleri, İstanbul, 1992, Ansiklopedisi, İstanbul, 1988, Cilt 6, 7, Aydınoğlu E., Türkiye Solu (1960-1980), "Bir Amneziğin Anıları", İstanbul, 2007.

[28] Данилов В., Политическая борьба в Турции 50-е начало 80-х годов XX в. (политические партии и армия), Москва, 1985, նույնի Турция 80-х: от военного режима до «ограниченной демократии», Москва, 1991, Пиотровский С., Свет и тени Турции, Москва, 1981, Киреев Н., История Турции XX, Москва, 2007.

[29] Feroz A., The Making of Modern Turkey, London, 2003, նույնի Turkey: The Quest for Identity, England, Oxford, 2003, նույնի The Turkish Experiment in Democracy, 1950-1975, London, 1977, Karpat K., Studies on Turkish Politics and Society, Selected Articles and Essays, Leiden.Boston, 2004, նույնի The Turkish Left, Journal of Contemporary History, Vol. 1, No. 2, Left-Wing Intellectuals between the Wars (1966), Sage Publication, pp. 169-186, Hale W., Turkish Politics and The Military, London, 1994, Ulus Ö., The Army and The Radical Left in Turkey: Military Coups, Socialist Revolution and Kemalism, New York, 2011.

[30] Ջրբաշյան էդ., Գրականության տեսություն, Երևան, 1980, նույնի Գրականագիտության ներածություն, Երևան, 1996:

[31] Бахтин М., Вопросы литературы и эстетики: Исследования разных лет, Москва, 1975.

[32] Поспелов Г., Введение в литературоведение, Москва, 3-е изд., 1988.

[33] Утехин Н., Жанры эпической прозы, Ленинград, 1982.

[34] Howe I., Politics and the Novel, New York, 1957.

[35] Boyers R., Atrocity and Amnesia, The Political Novel Since 1945, New York, 1985.

[36] Scheingold S., The Political Novel, Re-Imagine the Twentieth Century, New York, 2010.

վեստականությամբ լավագույնս արտացոլում են բանտերի, խոշտանգումների, հետապնդումների մթնոլորտը, անհատի եսի ճգնաժամը և դրանից դուրս գալու ուղիների փնտրտուքը, նրա վախերն ու հաղթանակները: Առանձնացված վեպերը գաղափարախոսությունների գեղարվեստական իրացման, կերպարների, դեպքերի նկարագրության եղանակների առումով լիովին նորություն են թուրքական գրականության համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են աշխատանքի հիմնական նպատակները, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՊԻ ԺԱՆՐԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ. ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլխից. առաջին ենթագլխում՝ **«Քաղաքական վեպի ժանրի կայացման նախադրյալները և տիպաբանական առանձնահատկությունները»**, համառոտ ներկայացվում են գեղարվեստական գրականության մեջ քաղաքական թեմատիկայի առկայության ու զարգացման պատճառները:

Քաղաքական արձակի, նրա տարատեսակների ու մոդիֆիկացիաների նույնականացումը որոշակի դժվարություններ է առաջացնում, քանի որ «Հնարավոր չէ տալ այս ժանրի անփոփոխ սահմանումը. ժանրը խառնվում է... Այն հաստատուն, անշարժ համակարգ չէ»[37]: Այնուհանդերձ, համադրելով գրականագետներ Ժ. Բլոթների, Ի. Հոուեի աշխատությունները՝ քաղաքական վեպ կարելի է համարել այն արձակ ստեղծագործությունը, որը գլխավորապես կենտրոնացած է քաղաքականության մեջ իշխանության դրսևորման շուրջ, որտեղ քաղաքական նկրտումները, ծրագրերն ու գործողությունները ներկայացվում են և՛ սյուժեի, և՛ հերոսի միջոցով[38]: Այս համատեքստում իշխանությունը քաղաքական ասպարեզում մարդկանց, իրադարձությունների վրա ազդելու և վերահսկելու կարողությունն է: Այս ժանրի վեպերում քաղաքականությունն «իրացվում է»

[37] Тынянов Ю., Поэтика, История литературы, Кино, Москва, 1977, стр. 256.
[38] Howe I., Politics and the Novel, New York, 1957, p. 20, Blotner J., The Political Novel, Doubleday & Company, INC., New York, 1955, p. 2.

արձակի հիմնական բաղադրիչների՝ սյուժեի, կոնֆլիկտի, կերպարների, կոմպոզիցիայի միջոցով, իսկ որպես «իրացման» պատճառ գրականագետ Թ. Քեմմը դիտարկում է միջավայրը, սոցիալական իրադարձությունն ու վեպի դաստիարակչական կամ քարոզչական նպատակը՝ գերակա կարգերի թերությունների լուսաբանումն ու դրանք հաղթահարելու ճանապարհների սահմանումը[39]:

Քաղաքական վեպը բնորոշվում է հերոսի ինքնորոշման աճող դրամատիկականացմամբ, աշխարհայացքի, արժեհամակարգի փոփոխությամբ: Այս դրսևորումը ստեղծագործության սյուժետային-կոմպոզիցիոն թելադրանք է, որն ապահովում է ընտրություն կատարելու և փորձություններ հաղթահարելու իրադրությունների անհրաժեշտությունը: Բացի այդ՝ սա հնարավորություն է տալիս վեպի հեղինակին մասնավորեցնել նաև քաղաքական գաղափարը՝ ըստ բնույթի ու իրավիճակի՝ հնարավորինս կրճատելով հեղինակային «մաքուր» միջամտությունը, մեծացնելով նրա բնութագրական կարգավիճակը: Նշենք սակայն, որ նման վեպերում երբեմն դժվար է լինում հստակ տարանջատել անհատի և հավաքական քաղաքական վարքագծի սահմանը, և քանի որ քաղաքական փորձի մեջ անհատականության դիմագիծը լավագույնս ցուցադրում են դրդապատճառները, ուստի՝ պատահական չէ, որ քաղաքական վեպերի գլխավոր հերոսների գործողությունները հիմնականում համոզիչ կերպով փաստարկված են:

Երկրորդ ենթագլխում՝ **«Թուրքական քաղաքական վեպի կայացման առանձնահատկությունները»,** ներկայացվում են թուրքական քաղաքական վեպի ձևավորման նախադրյալները, որոշակի հասարակական-քաղաքական իրողությունների ազդեցությամբ նրա մոդիֆիկացիաները:

Վեպի ժանրը, համաշխարհային գրականության համեմատությամբ, թուրքական գրականության մեջ ի հայտ է եկել բավականին ուշ՝ 19-րդ դարի կեսերից: Սրա պատճառներն էին մի կողմից Օսմանյան կայսրության քաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսական տարբերությունները, մյուս կողմից՝ բացակայում էր հասարակական այն կառուցվածքը, որում առաջնայինն անհատն էր, ուստի ինչպես նշում է թուրք գրականագետ Ֆ. Նաջին՝ «Որտեղ չկա անհատ, չի կարող լինել նաև վեպ»[40]:

Օսմանյան ժամանակաշրջանի գրականության մեջ վեպի ժանրի ձևավորումը պատմական, սոցիալական ու քաղաքական փոփոխությունների արդյունք չէր: Գրական այս նոր միտումը պայմանավորված էր Թանզիմաթի[41] ժամանակաշրջանով, երբ արևմտյան և մասնավորապես՝ ֆրանսիական գրականության լայնածավալ թարգմանությունների շնորհիվ թուրքական գրականություն մուտք գործեցին գրական նոր մոդելներ, և դրանց նմանությամբ գրվեցին առաջին թուրքական վեպերը, որոնց հիմնական թեմատիկան երկրի հասարակական-քաղաքական իրողություն-

[39] Kemme T., Political Fiction, the Spirit of the Age, and Allen Drury, Bowling Green State University Popular Press, 1987, p. 5.

[40] Naci F., 100 Soruda Türkiye'de Roman ve Toplumsal Değişme, İstanbul, 1990, s. 14-21.

[41] Թուրքիայի պատմության մեջ թանզիմաթը բարեփոխումների ժամանակաշրջան էր (1839-1878 թթ.):

ներն էին: Նշենք, որ այս կրկնօրինակման ժամանակաշրջանն ավարտվեց միայն 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, և ստեղծագործությունները, թեև ոչ հմտորեն, բայց սկսեցին «տեղական գույն ստանալ»:

Թեև որոշ թուրք ուսումնասիրողներ պնդում են, որ թուրքական գրականության պատմության մեջ վեպի ժանրը ձևավորվել և զարգացել է քաղաքականությանը զուգահեռ, և արդեն 19-րդ դարի կեսերից թուրքական վեպը «ձեռք է բերել քաղաքական ինքնություն», այնուհանդերձ քաղաքական իրադարձություններն ու ձախակողմյան (առավելապես մարքսիզմ և սոցիալիզմ) գաղափարախոսությունները գեղարվեստական գրականության մեջ լայնորեն արծարծվել են միայն 20-րդ դարի 20-50-ական թվականներին: Սա սերտորեն կապված է այն հանգամանքի հետ, որ Թուրքիայում արևմտյան գրականությամբ դաստիարակված ձախակողմյան շարժման ղեկավարները գրական ստեղծագործությունները հաճախ օգտագործվում էին իրենց գաղափարները տարածելու և քաղաքական շարժման գործնական մեթոդներ առաջարկելու համար: Հիշյալ ժամանակահատվածում բարդանում է նաև ռեալիստական գրականությունը. ի հայտ է գալիս սուբյեկտիվ-հոգեբանական արձակը, ձևավորվում սոցիալ-հոգեբանական ուղղությունը: Վերջինիս ազդեցությամբ թուրքական գրականության մեջ խնդիրների, գեղարվեստական ընդհանրացման ձևերի, ոճի տեսանկյունից այլևս գերակա է դառնում սոցիալական ռեալիզմի ուղղությունը:

Թուրքիայում գեղարվեստական գրականությունն քաղաքական քննադատությունների, գաղափարախոսական քարոզչությունների ազատ հարթակ դարձավ հատկապես 1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից հետո: Թուրքական գրականության պատմության մեջ այդքան շատ գրողներ երբևէ այդպես բաց, արհամարհական չէին խոսել տիրապետող կարգերի և նրանց անարդարությունների մասին: Արդյունքում ի հայտ եկավ քաղաքականացված արձակի մի շերտ, որում գերակշռում էր ձախակողմյան սոցիալիստական գաղափարախոսությունը: Ժամանակաշրջանի խնդիրները դիտարկելով սոցիալիստական պրիզմայով՝ հեղինակներն իրենց վեպերի հիմնական թեման դարձրին երիտասարդական շարժումները, որոնք նախորդել ու նախապատրաստել էին հեղաշրջումը, տիրող վարչակարգի անօրինականությունները, մտավորականների ընդվզումները: Նման ստեղծագործություններում, որպես կանոն, գրողները շեշտում էին այն հանգամանքը, որ հեղաշրջումը համաժողովրդական հենարան չի ունեցել, իսկ հասարակության ամենաակտիվ խմբի՝ երիտասարդության ինքնագիտակցումը, թե ինքը զորեղ ու հաջողակ ուժ է, հետագայում պատճառ դարձավ, որ նույն երիտասարդությունն ընդգրկվի պարտիզանական, անգամ ահաբեկչական շարժումների մեջ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՊՆ ԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԻՆ. «ՄԱՐՏԻ 12-Ի ՎԵՊ»

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Հասարակական-քաղաքական լարվածությունը Թուրքիայում 1960-ականների երկրորդ կեսին և 1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտությունը. համառոտ ակնարկ»**, ներկայացվում են Թուրքիայում 1960-ական թթ. վերջի 70-ական թթ. սկզբի ներքաղաքական զարգացումները: Սա մի ժամանակաշրջան է, որը Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ բնորոշվում է գաղափարախոսական-քաղաքական պայքարի անսովոր սրվածությամբ, աշխատավորական շարժումների վերելքով, մանր բուրժուազիայի ներկայացուցիչների քաղաքական ակտիվությամբ, երկրում ժողովրդավարական կարգեր հաստատելու մտավորականության նաև ուսանողության կոչերով: Քաղաքական այս թեժ մթնոլորտում լայն ընդգրկում էր ստացել հատկապես երիտասարդական շարժումը, որը պայքարում էր ոչ միայն ժողովրդավարական կառույցների ստեղծման համար, այլև ձգտում էր կրթական հաստատությունների ղեկավարմանը մասնակցելու իրավունք ստանալ: Հասարակական-քաղաքական այս հուզումների արդյունքում 1971 թ. մարտի 12-ին Թուրքիայի զինված ուժերը միջամտեցին երկրի կառավարմանը՝ իրենց ձեռքը վերցնելով իշխանությունը: Թուրքիայի կառավարությունը երկրի մի շարք շրջաններում արտակարգ դրություն հայտարարեց և ստեղծեց պետական անվտանգության դատարաններ: Առաջնորդվելով «կոմունիստական գործունեության» և «կոմունիզմի քարոզչության» համար պատիժ նախատեսող քրեական օրենսգրքի 141 և 142-րդ հոդվածներով՝ կառավարությունն անցավ ձախակողմյա ուժերի ճնշմանը: Սկսվեց դաժան բռնաճնշումների ժամանակաշրջանը. փակվեցին կուսակցություններ, առաջադիմական տպագիր օրգաններ, ձախակողմյա կառույցներ, մասնավորապես՝ Թուրքիայի ուսուցիչների միությունը (Türkiye Öğretmenler Sendikası), «Դև-գենչ» (Türkiye Devrimci Gençlik Federasyonu) երիտասարդական կազմակերպությունը, ցրվեց Թուրքիայի բանվորական կուսակցությունը (Türkiye İşçi Partisi), իսկ նրա ղեկավարները ձերբակալվեցին: Ավելորդ չէ նշել, որ Թուրքիայում զինվորական միջամտությունից հետո մեկ տարվա ընթացքում դատապարտվեց 687, իսկ ձերբակալվեց ավելի քան 5000 մարդ[42]:

Այս գլխի երկրորդ ենթագլխում՝**««Մարտի 12-ի վեպի» կայացման և զարգացման առանձնահատկությունները»,** քննության է ենթարկվում քաղաքականացված արձակի թեմատիկ-գաղափարախոսական հիմքը, գնահատականներ ու ընդհանրացումներ են տրվում «Մարտի 12-ի վեպի» լեզվի, ոճի, ժանրային առանձնահատկությունների վերաբերյալ:

1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտությունն ու դրան հաջորդած բռնաճնշումներն այնքան մեծ ցնցում էին հասարակական գիտակցության համար, որ գրականության մեջ անխուսափելիորեն նոր փնտրտուքների պատճառ դարձան՝ ի հայտ բերելով քաղաքականապես հագեցած

[42] Landau J., Radical Politics in Modern Turkey, Brill, Leiden, 1974, p. 45.

բոլորովին նոր երկխոսություն: «Մարտի 12-ի վեպն» ընդունվեց որպես տերմին՝ հիմնականում ձախակողմյան գրողների ստեղծագործությունները նկարագրելու համար:

Ինչպես նշել էինք, վեպերի մեծ մասի հեղինակներն ուղղակի կամ անուղղակի կերպով շարժումներին մասնակցած և իրենց տեսակետների համար քաղաքական հետապնդումների ենթարկված գրողներ են: Եվ քանի որ վերջիններս ազատ արտահայտվելու հնարավորություն ունեին միայն իրենց ստեղծագործություններում, դրանք էլ գլխավոր հերոսի և հեղինակի քաղաքական հայացքների շնորհիվ ուղղակիորեն դարձել են գաղափարախոսություն: Այս գրողներն, անդրադառնալով 1970-ականների սոցիալ-քաղաքական շերտերի տեղաշարժերին ու ճնշումներին, ներկայացրեցին երիտասարդական շարժման ձախողումից հետո ձախակողմյան անհատի ֆիզիկական ու հոգեբանական «ոչնչացումը», պատկերեցին 60-ականների վերջերի և 70-ականների սկզբի Թուրքիան, թուրքական հասարակության բևեռացման տարբեր դրսևորումները, փոխանցեցին այս ժամանակահատվածի գաղափարախոսական տարաձայնությունների լարված մթնոլորտը, զանգվածային շարժումների, երիտասարդության ծայրահեղական գործողությունների, ժողովրդի և մտավորականության դերի ընկալման, հեղափոխական պայքարի մարտավարության վերաբերյալ իրարամերժ կարծիքները:

«Մարտի 12-ի վեպերը», ձևավորվելով թուրքական իրականության համար կարևոր պատմական և սոցիալական գործընթացների ազդեցության տակ և զարգանալով որպես քննադատական ռեալիզմի առանձին հոսանք, իրենց ուշադրությունը կենտրոնացրեցին նոր տեսակի հերոսի՝ քաղաքականապես ակտիվ, «խռովարար» անհատի շուրջ, ով նաև զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող հասարակության արթնացող գիտակցության կրող էր: Այս առումով «Մարտի 12-ի վեպերը» ոչ այնքան ռազմական միջամտության հետևանքների կայուն արտացոլանք են, որքան ակտիվ բեկում՝ հասարակական գիտակցության մեջ: Հետևաբար «Մարտի 12-ի վեպերը» ինչպես «պատմություն կերտող են», այնպես էլ «պատմության արտադրանք», քանի որ այս վեպերի հերոսներն ընդօրինակելի կերպարներ էին բազմաթիվ մարդկանց համար: Սրանք յուրատեսակ «Վերթերի ախտանիշի»[43] ազդեցություն ունեին 1970-ական թթ. երիտասարդ ակտիվիստների վրա:

Նկատենք, սակայն, որ այս ստեղծագործությունների առանձնահատկություններից է այն, որ հեղափոխական գլխավոր հերոսը միաժամանակ նաև ճնշումների ենթարկվող անհատ է: Մինչդեռ սովորաբար վեպերի գլխավոր հերոսներն այնպիսի անձինք են, ովքեր իրենց ազդեցությամբ ուղղորդում կամ որոշակի դեր են խաղում դեպքերի հաջորդական զարգացման ընթացքում: «Մարտի 12-ի վեպերում», ընդհակառակը, հեղա-

[43] Հոգեբանության մեջ գեղարվեստական գրականության կամ ֆիլմերի ազդեցությամբ և նույնությամբ կատարված ինքնասպանություններն անվանում են «Վերթերի ախտանիշ»: Տերմինը շրջանառության մեջ է դրել ամերիկացի սոցիոլոգ, հոգեբան Դևիդ Ֆիլիփսը, որը ծագում է Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպից:

փոխական երիտասարդը ստիպված է դիմակայել իր գլխին եկած «չարիքներին»: Ընդ որում նման վեպերն առանձնանում են իրականության կենդանի նկարագրողականությամբ, խոշտանգումների տեսարանների մանրամասնությունների գերակայությամբ, ինչի հետևանքով դրանցում մեծամասամբ հեղափոխական շարժումը և գաղափարախոսական պայքարը հետին պլան են մղվել՝ իրենց տեղը զիջելով բռնաճնշումների ու տիրող վարչակարգի կամայականությունների նկարագրություններին:

1970-ական թթ. Թուրքիայի սոցիալ-քաղաքական կյանքի բազմապլանային խճանկարը քննադատական վերլուծություններով ներկայացնելու տեսանկյունից «Մարտի 12-ի վեպերի» տարատեսակների (վավերագրական (դոկումենտալ)-քաղաքական, բելլետրիստական-քաղաքական) մեջ առանձնանում են սուբյեկտիվ-հոգեբանական քաղաքական վեպերը, որոնք ինքնակենսագրական բնույթ ունեն, և հերոսների կյանքը մեծամասամբ հեղինակի կենսագրության որոշակի դրվագներն են: Ընդ որում դրանք միայն այն իրավիճակներն են, որոնք ի ցույց են դնում հերոսների հոգեկան ապրումները, կամ ինչ-որ չափով նպաստում են անձի հոգեբանության փոփոխմանը: Այս ստեղծագործություններում, որպես կանոն, խառնված են տարածաժամանակային հարթությունները, հերոսները սովորաբար գրեթե չունեն կենսագրություն, տեքստում գաղափարական-գեղարվեստական արժեք չունի նաև կենցաղային իրականությունը: Նման ստեղծագործություններում մենախոսությունն ամենակիրառելի գեղարվեստական միջոցն է, որը կառուցվում է «գիտակցության հոսքի» հիման վրա, և այս պարագայում ժամանակի ու իրադարձությունների հերթականության խախտմանը հակադիր՝ զարգանում է «զգացմունքների շղթայակցման» սկզբունքը, ինչն էլ հնարավորություն է տալիս հեղինակին ցույց տալ սյուժեի զարգացման գեղարվեստական տրամաբանությունը հատկապես հերոսների համար ճակատագրական պահերին:

««Մարտի 12-ի վեպի» հիմնական առանձնահատկությունների դրսևորումներն էրդալ Օզի և Մեհմեթ էրօղլուի ստեղծագործություններում» ընդհանուր վերնագիրը կրող երրորդ ենթագլխում էրդալ Օզի «Վիրավոր ես» և Մեհմեդ էրօղլուի «Մենության մեջ» ստեղծագործությունների քննական վերլուծություն է կատարվել:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՊԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1980-ԱԿԱՆՆԵՐԻՆ

Առաջին ենթագլուխը՝ **«1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը. համառոտ ակնարկ»**, «Թուրքիայի Հանրապետության պատմության ամենաարյունոտ ժամանակաշրջան» բնորոշված ռազմական հեղաշրջման նախադրյալների, պատճառների ու հետևանքների ուսումնասիրություն է:

1980 թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում, որը շրջադարձային էր հանրապետության պատմության համար: Մասնագետները նշում են, որ այս հեղաշրջման նախադրյալները խորն են ու բազմատարր, մինչդեռ հեղաշրջման կազմակերպիչների կողմից որպես այդպիսիք շեշտվում են երկրի սոցիալ-տնտեսական ճգնաժամը, ահաբեկչությունը, քրդական անջատողականությունը, ներքաղաքական ճգնաժամը, ձախակողմյան շարժման գործունեությունը, ինչպես նաև արտաքին ազդեցությունը:

Այս հեղաշրջումն, ըստ էության, 1970-1980-ականների սահմանագիծն էր, որով ավարտվեց պատմական նախորդ փուլը: Հեղաշրջումը վերացրեց նախորդ տասնամյակում ձևավորված քաղաքական կուսակցություններն ու մի շարք այլ հասարակական կազմակերպություններ, ընդունվեց նոր սահմանադրություն, որն ընդհանուր առմամբ կոչված էր փոխելու Թուրքիայում հասարակական կառուցվածքի ձևավորման հիմնական ուղղություններն ու ստեղծել նոր մոդելի սոցիալական կառույց՝ ապաքաղաքականացված հասարակություն: Միևնույն ժամանակ 1980-ական թթ. պետք է դիտարկել նաև որպես թուրք հասարակության ցիկլային զարգացման հերթական փուլ, որը հստակ տարրանջատված է երկրի հետռազմական պատմության մեջ:

Այս գլխի երկրորդ ենթագլխում՝ **««Սեպտեմբերի 12-ի վեպի» ձևավորման և զարգացման առանձնահատկությունները»,** ներկայացվում են գրական այս ուղղության ձևաբովանդակային առանձնահատկությունները՝ դրանք զուգամիտելով նախորդ տասնամյակի գրականության հետ: Սույն ենթագլխում ուսումնասիրվել են նաև թուրքական քաղաքական վեպի անկման պատճառները՝ դրանք դիտարկելով նախևառաջ համաշխարհային գրական գործընթացների համատեքստում:

Թուրքական գրականության մեջ «Մարտի 12-ի վեպերի» նմանությամբ 1980-ական թթ. ներքաղաքական կյանքն արտացոլած ստեղծագործություններն ընդունված է կոչել «Սեպտեմբերի 12-ի վեպ» անունով: Այս գրականությունը նույնպես հիմնականում ձախակողմյան է, նույնն է վեպերի թեմատիկան՝ հեղափոխականների կենսակերպի նկարագրություն, ժամանակաշրջանի մթնոլորտի արտացոլում, սակայն «Սեպտեմբերի 12-ի վեպերում» նկատվում են նաև կերպարների և կիրառված գեղարվեստական հնարքների առանձնահատկություններ: Մեծ տեղ է տրվում զգացմունքային մարդու և մարդ-ռոբոտի միջև տեղի ունեցող հոգեբանական բախմանը, անհատի «ես»-ի փակուղիներին: Քաղաքական այս վեպերի համար հատուկ է նաև կեղծ ինքնություն ու ծածկագիր անունների

օգտագործումը: Ի դեպ, հերոսների անունները ևս իրենց մեջ որոշակի սիմվոլիկա և ենթատեքստ են պարունակում. այսպես՝ հեղափոխականների համար գրողները նախընտրում էին Դևրիմ (հեղափոխություն), էյլեմ (գործողություն), Ումութ (հույս) և նման այլ անուններ, իսկ աջ ծայրահեղականների համար՝ Սելջուկ, Մեթե, Օղուզ և այլն: Սեպտեմբերի 12-ի» վեպերում հեղինակները խորհրդանշական արժեք են հաղորդել նաև այն վայրերին, որտեղ ծավալվում է սյուժեն: Ընդ որում դրանք զուտ ֆիզիկական վայրերը չեն, այլ միևնույն ժամանակ հիշողությունը ձևավորող տեղանքներ: Մասնավորապես՝ որոշ քաղաքներ նույնականացվում են որոշակի գաղափարախոսությունների հետ: Այսպես՝ եթե էրզրումը ներկայացվում է որպես աջերի, իսկ Օրդու քաղաքը՝ որպես ձախերի «ամրոց», ապա Ստամբուլը ձախակողմյան շարժման համար երազանքների, «դատական հայցի քաղաք» էր:

1980-ական թթ. քաղաքական վեպերում արտացոլված է նաև հեղաշրջմանը հաջորդած ժամանակաշրջանը, երբ ձերբակալությունները, խոշտանգումները, ընտանիքին ու սիրելիներին վնասելու վախը, փախուստն ու աքսորը կենսաձև էին դարձել: Նման վեպերի հերոսները, ապրելով փախստականի կյանքով և մտնելով «որսի» հոգեբանության մեջ, արդեն առաջնորդվում էին ոչ թե մարդկային հակազդումներով, այլ բնազդով:

Ընդհանուր առմամբ 1980-ական թթ. քաղաքականացված արձակ գրականության մեջ առանձնացվում է 2 հիմնական ուղղվածություն՝

ա)«Բանտային գրականություն»

«Բանտային գրականություն» տերմինով են բնորոշում այն ստեղծագործությունները, որոնք գրվել են բանտարկյալների կողմից կամ նկարագրում են բանտային կենցաղը: Այս ստեղծագործությունները կարևոր են ավելի շատ իրենց պատմական, քան գեղարվեստական արժեքով, քանի որ երբ «բանտային գրականությունը» դիտարկում են որպես պատմական տեքստ, այն վերածվում է զուտ իշխող վարչակարգի մասին պատմական ճշմարտության ներկայացման ու հեռացվում իր մշակութային ամբողջականությունից: Մինչդեռ իբրև գրական տեքստ՝ այն որոշակի վայր է, որտեղ կան տրավմայի մասին հիշողություններ, որոնք կարող են և՛ ստեղծվել, և՛ քանդվել, որտեղ կարող է նկարագրվել «աննկարագրելին», որտեղ վստահության զգացողությունը կարող է արտահայտվել գրականության միջոցով, ինչպես նաև այստեղ խնդիր են դառնում անցյալի կառուցումն ու ամբողջականացումը: Այս պարագայում «բանտային գրականությունը» պետական չարաշահումների վավերացումն է, ընդդիմության և հակազդեցության դրսևորում, որը պատմականորեն ավելի ազդեցիկ և երկարատև է:

բ) «Նորարական վեպ»

«Նորարական վեպերը» քաղաքական վեպի ավանդույթների անկման ազդարարն են, քանի որ վերջիններս չեն առանձնանում գաղափարի կարևորությամբ և դրանք իրացնելու գեղարվեստական ձևերով: Այս քաղաքական վեպերի հիմնական թեմատիկան ինքնաճանաչումն է, անցյալում գործած սխալների ոչ բացահայտ քննադատությունը (քանի որ վախենում էին դավաճանի դրոշմից) և հատուցումը, ինչպես նաև «ոչնչացած

անհատի» անձնական կյանքը: Նման ստեղծագործություններում արդեն հետհեղափոխական ժամանակաշրջանը զուտ մթնոլորտ է, պատճառահետևանքային օղակ կամ անցյալի վերհուշ: Փոփոխությունների է ենթարկվել նաև ստեղծագործությունների լեզուն: Այն այլևս զերծ է քաղաքական պարտավորվածություններից և «միկրոտարրերի» խաղ է, որոնց միջոցով կառուցվում է ստեղծագործության «գերիրականությունը»: Այս վեպերի լեզուն անզուսպ ու անհիմն է, որի պարտադիր տարրերից են մակարոնիզմները, անկանոն բառապաշարը և «շիզոֆրենային լեզուն»:

Այս գլխի երրորդ՝ **««Սեպտեմբերի 12-ի վեպերի» առանձնահատկությունների դրսևորումներն Ադալեթ Աղաօղլուի և Օրհան Փամուքի ստեղծագործություններում»** վերնագիրը կրող ենթագլուխը նվիրված է Ադալեթ Աղաօղլուի «Հարսանիքի գիշեր» և Օրհան Փամուքի «Լռին տունը» ստեղծագործությունների գեղարվեստական ձևերի քննությանը:

Ատենախոսության վերջում ընդհանրացվում է աշխատանքը, ներկայացվում են հետևյալ հիմնական ***եզրակացությունները.***

1. Թուրքական քաղաքական վեպի զարգացումը պատմականորեն բարդ և բազմատարր է: Լինելով Թանզիմաթի ժամանակաշրջանի մշակութաբանական բացառիկ երևույթ՝ այն զարգացել է արևմտաեվրոպական գրականության անմիջական ազդեցությամբ: Եվ քանի որ արձակում ձևի ու բովանդակության առումով քաղաքականության արտահայտման եղանակները մշտապես տարբեր են եղել, քաղաքական վեպն ինտելեկտուալացվել է, կորցրել քաղաքական-երգիծական համայնապատկերային կառուցվածքն ու դարձել տրամախոսական-վիճաբանական և դրամատիկ-հոգեբանական արձակի օրինակ:
2. Թուրքական քաղաքական վեպի ժանրի զարգացման ամենանշանակալից փուլ է համարվում 1971 թ. մարտի 12-ի զինվորական միջամտությունից հետո ընկած ժամանակահատվածը, որը թուրքական գրականագիտության մեջ ստացել է «Մարտի 12-ի վեպ» անվանումը: Թուրքիայի սոցիալ-քաղաքական կյանքի այս կարևոր շրջանի գեղարվեստական անդրադարձը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ գրողների մի ստվար հատված ձախակողմյան շարժման ակտիվ գործիչներ և համակիրներ էին, ուստի գեղարվեստի նյութ դարձրին անձամբ իրենց ապրածները:
3. «Մարտի 12-ի» գրեթե բոլոր վեպերում լայն ու ազդեցիկ տեղ են զբաղեցնում խոշտանգումների տեսարանները, որոնք առանձնանում են կենդանի նկարագրողականությամբ: Մինչդեռ հեղափոխական շարժումն ինքնին հետին պլան է մղվել՝ իր տեղը զիջելով բռնաճնշումների ու տիրող վարչակարգի կամայականությունների պատկերմանը: Այսինքն՝ նման վեպերի շարադրանքը կառուցված է հեղափոխական հերոսի՝ զոհի, անմեղության շուրջ՝ առանց շեշտելու նրա քաղաքական ուժը, նպատակները կամ գործունեությունը:
4. Թուրքական քաղաքականացված արձակ գրականության մեջ նոր երևույթ են սուբյեկտիվ-հոգեբանական քաղաքական վեպերը, որոնց ուսումնասիրության առարկան ոչ թե քաղաքական իրադարձությունն է, այլ այդ իրադարձության սուբյեկտիվ ընկալումը և դրանով պայմա-

նավորված մարդու հոգևոր զարգացումը: Այլ կերպ ասած՝ այստեղ կարևորվում է մարդու ներաշխարհի վերլուծությունը:

5. 1970-ական թթ. թուրքական գրականության ասպարեզ մուտք գործեցին մեծ թվով կին գրողներ, ովքեր իրենց ստեղծագործությունների հերոս դարձրին կնոջը՝ ներկայացնելով ռազմական միջամտության ժամանակաշրջանում թուրքական հասարակության մեջ մտավորական ձախակողմյան շարժման մասնակից կնոջ կարգավիճակը, վերջինիս նկատմամբ հասարակական վերաբերմունքն ու այն գինը, որը կինը պետք է վճարեր «հեղափոխական» լինելու համար:
6. Քաղաքականացված արձակի երկրորդ փուլը, որն ընդունված է կոչել «Սեպտեմբերի 12-ի վեպ» ընդհանուր անունով, ևս պայմանավորված է 1980 թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցած ռազմական հեղաշրջմամբ: Այս ստեղծագործությունների մեծ մասը վեպ-հուշագրություններ են, և չափից շատ խոշտանգումների նկարագրությունների պատճառով դրանց ընդունված է անվանել նաև «Բռնությունների գրականություն»: Այս գրականության հիմնական թեմատիկան ևս քաղաքական հետապնդումներն ու նախնական կալանքներն են, բռնակալությունը, համալսարանների և ակադեմիական այլ կառույցների վրա գործադրվող ճնշումը, ձախակողմյան կառույցների պայքարը, ներքին հաշվեհարդարները, քաղաքական գաղափարախոսությունների նկատմամբ հավատի կորուստը, կտտանքներն ու բանտերը:
7. 1980-ական թթ. քաղաքական վեպի ավանդույթների անկման ժամանակաշրջան են: Այս նոր միտումների ու խորքային փոփոխությունների բնույթը պայմանավորված է պատմական ու մշակութային իրողություններով, ինչպես նաև թուրքական գրականության մեջ պոստմոդեռնիզմի ուղղության արմատավորմամբ:
8. Թուրքական քաղաքականացված վեպերը միայն 1960-80-ական թթ. դեպքերի վկայագրություն, ծերբակալությունների, խոշտանգումների մասին պատմող սահմանափակ ստեղծագործություններ չեն. իրականում դրանք Թուրքիայում հասարակական զարգացումների գեղարվեստական փաստարկներն են, պետության և իր քաղաքացիների հետ հարաբերությունների հավաքական մշակութային հիշողություն: Այս ստեղծագործությունները նպաստեցին հասարակական կարծիքի ձևավորմանը, թուրքական հասարակության տարբեր շերտերի սոցիալական ակտիվության բարձրացմանը՝ դառնալով զգացմունքների ու գործողությունների արտահայտչամիջոց:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքները

1. Քաղաքական վեպի ժանրի ձևավորումն ու զարգացումը թուրքական գրականության մեջ (XX դարի 50-70-ական թթ.),Գարուն, Երևան, 2012, թիվ 11-12, էջ 20-24:
2. Թուրքական քաղաքական վեպի թեմատիկ առանձնահատկությունների շուրջ (1980-ական թվականներ), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2012, հատոր 7, էջ 371-378:
3. 1980-ական թթ. թուրքական «Բանտային գրականությունը» կամ «Նոր ձայներ», Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2013, հատոր 8, էջ 202-214:
4. Թուրք գրող էրդալ Օզի «Վիրավոր ես» վեպը, ԵՊՀ ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածու 1 (1), Երևան, 2014, էջ 83-87:
5. Պոստմոդեռնիստական «նորարական վեպը» որպես թուրքական քաղաքական վեպի ավանդույթների անկման ազդարար, էջմիածին, Ս. էջմիածին, 2015, Ե, էջ 89-97 (համահեղինակ՝ Ռ. Մելքոնյան):
6. Ադալեթ Աղաօղլուի ստեղծագործությունների ոճական և թեմատիկ առանձնահատկությունների շուրջ, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2015, հատոր 9, էջ 366-376 (համահեղինակ՝ Ռ. Մելքոնյան):

Анушик Оганесовна Мартиросян

ОСОБЕННОСТИ ФОРМИРИВАНИЯ И РАЗВИТИЯ ТУРЕЦКОГО ПОЛИТИЧЕСКОГО РОМАНА (70-80-е ГОДЫ XX ВЕКА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07 – «Зарубежная литература».

Защита состоится 20-ого ноября 2015г., в 12:30 на заседании специализированного совета ВАК 003 по специальности «Армянская и зарубежная литература», действующего при Институте литературы имени М. Абегяна, по адресу: 0002, Республика Армения, г. Ереван, ул. Григора Лусаворича 15.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена особенностям развития жанра политического романа в турецкой литературе 1970-80-х годов, исследованию жанровых вариаций по форме и содержанию произведения. Развитие жанра политического романа в Турции является исторически сложным и многокомпонентным явлением. Ситуация объясняется не только важными для турецкой действительности историческими и социальными процессами, но и укоренением реалистической эстетики и поэтики в литературе.

Исследование истории развития жанра политического романа показывает, что социально-политические события получили широкое отражение в литературных произведениях, особенно в конце 1960-х - начале 1980-х. Причинами данного явления являются: распространение социалистической идеологии, бурные внутриполитические процессы и военные перевороты. Это также период, когда развитие жанра достигает своего пика, потому что влияние идеологической и политической борьбы, военное вмешательство 12 марта 1971 года и военный переворот 12 сентября 1980 года привели к формированию специфических жанровых инвариантов: «роман 12 марта» и «роман 12 сентября».

Диссертация состоит из введения, трех глав с соответствующими параграфами, заключения и списка использованной литературы.

Во введении обосновывается актуальность диссертационной темы, представлены основные цели и задачи исследования, его научная новизна, практическая ценность, а также история вопроса и критический обзор использованной литературы.

Первая глава, озаглавленная «*Становление жанра политического романа в Турции: особенности и предпосылки*» включает в себя два параграфа. В первом параграфе представлены предпосылки развития жанра политического романа в мировой литературе и его типологические особенности. Второй параграф посвящен предпосылкам развития турецкого политического романа, особенностям влияния некоторых социально-политических событий того времени, исследованию жанровых модификаций.

Глава вторая, «*Турецкий политический роман на пике своего развития: "роман 12 марта"*» подразделяется на три параграфа. Первый параграф рассказывает о политических ожиданиях конца 60-х начала 70-х годов, революционном движении, военном вмешательстве, произошедшем 12 марта 1971 года и последующих репрессиях. Второй параграф посвящён исследованию особенностей поджанра «роман 12 марта», который считается вершиной развития жанра политического романа. Мы подробно останавливаемся на проблемах идеологии и тематики произведений, языка и стиля. Необходимо отметить, что данный жанр вдохнул новую жизнь в турецкую литературу, изменил ментальный уровень турецкого романа. Он насыщен левыми политическими идеями и героями-революционерами. Многие из авторов подобных политизированных произведений сами были активными участниками революционной борьбы и левых политических движений. Они подвергались насилию, заключению и преследованиям, и в своих произведениях они часто отражали личный травматический опыт. Следовательно, большинство романов данного жанра являются, с одной стороны, документальными, а с другой стороны, в некотором роде, - автобиографическими произведениями. Иногда в них можно найти характеристики мемуарной литературы. Писатели, описывающие изменения в социально-политических слоях турецкого общества того времени, показывают, как после неудач левого движения начинается физическое и психологическое «уничтожение» личности у носителей левых идей. В подобных произведениях представлены: Турция указанного периода, поляризация турецкого обществав различных модификациях, накаленная атмосфера идеологических противоречий, массовые движения, молодежные террористические организации, противоречивые мнения о роли народа и интеллигенции в революционной борьбе.

В третьем параграфе анализируются романы Эрдала Оза «Ты ранен» и Мехмеда Ероглу «В одиночестве».

Третья глава нашего исследования тоже состоит из трех параграфов, первый из которых, расследует самый кровавый период в истории Турецкой Республики, его предпосылки, причины и последствия военного путча. Во

втором параграфе представлены жанровые характеристики «романа 12 сентября», особенности формы и содержания произведений в сравнении с литературой предшествующего десятилетия. Хотелось бы отметить, что здесь мы вновь имеем дело с преимущественно левой идеологией, тематика произведений тоже не меняется: описание жизненных перипетий революционеров, отражение политической атмосферы периода. Однако, в «романах 12 сентября» можно заметить изменения в развитии характеров героев и более продвинутые литературные приемы. Особое внимание уделяется психологическому конфликту между чувствительным человеком и роботом, тупикам и преодолениям личностного «я». В данном параграфе исследуются также причины упадка традиций жанра политического романа, которые рассматриваются в контексте развития мировой литературы. Третий параграф посвящён исследованию художественных особенностей романов Адалета Агаоглу «Свадебная ночь» и Орхана Памука «Дом тишины».

В Заключении представлены итоги проведенного исследования.

Anushik Hovhannesi Martirosyan

THE FORMATION AND DEVELOPMENT PECULIARITIES OF TURKISH POLITICAL NOVEL (THE XX CENTURY'S 70-80-s)

The Dissertation to obtain the scientific degree of Candidate of Philological Sciences, in the specialty of "Foreign Literature" (Specialty code 10.01.07).

The public defense of the dissertation is scheduled for November 20th, 2015, at 12:30, at the meeting of the Specialized Council of "Armenian and Foreign Literature" 003 at the Institute for Literature after M. Abeghyan NAS RA. Address: 15 Grigor Lusavorich Street, Yerevan, RA, 0002.

SUMMARY

The dissertation analyses the development of political novel in Turkish literature in 1970-80-s, studies its main forms and peculiarities. The emergence of the genre of political novel was historically a multi-sided complex as politics initially, their form and content had opportunity to be expressed in prose differently. This was due not only to the reality of Turkish historical and social processes, but also to the establishing of the realism aesthetics and poetics in literature.

It should be noted that the study of the political novel's history shows that the socio-political events generated various responses in Turkish literature especially during the period from late 1960-s till early1980-s. It can be explained by reasons of wide spread socialist ideology in Turkey in 1960-80-s, as well as by rapid political changes and military coups. This period is also considered to be the culmination of the development of Turkish political novel. In particular the military intervention, happened because of ideological influence and political struggle on March 12, 1971, and the military coup on September 12, 1980, reflected in literature, led the settlement of unique "March 12 novel" and "September 12 novel" literary trends.

The dissertation consists of introduction, three chapters with their corresponding subchapters, conclusion and bibliography.

The Introduction of our research describes the main objectives, the methodological basis of the study, its pragmatic significance; it also justifies the novelty, importance and aim of the theme. A brief review of literature is also provided.

The first chapter entitled "*The Development of the Genre of Turkish Political Novel: Preconditions and Main Peculiarities*" consists of two subchapters. The

first subchapter presents a brief description of the establishment and the background of the genre of political novel in world literature and its typological features. The second one describes the preconditions for the formation of Turkish political novel, studies its certain modifications due to the social and political realities.

The second chapter "*Turkish Political novel in its peak: "March 12 Novel"*" is made of three subchapters. The first subchapter presents social and political events, revolutionary movements in Turkey in 1960-70-s, the military intervention and the subsequent repression on March 12, 1971. The second subchapter describes the thematic and ideological basis in subgenre of Turkish political novel "March 12 novel", its language, stylistic and genre peculiarities. It should be noted that such literary genre directed its attention towards left-wing ideology and revolutionary heroes and gave a new turn to Turkish literature. Turkish novel has improved the mentality level. Most of the authors of political prose took an active part in revolutionary struggle or the left-wing social movements. They had suffered violence, torture and persecution, and portrayed their own traumatic experience from realistic positions. Subsequently, on one hand, the greater part of such novels was documentary, but, on the other hand, autobiographical, sometimes the features of the memoir genre can be found. Having described Turkey's social and political changes and pressure in 1970-s, the writers showed the physical and psychological "extermination" of progressive youth after the failure of left-wing social movement in late 60-s and early 70-s Turkey, the various forms of polarization in Turkish society; presented the tense atmosphere of ideological conflicts during the period, the mass movements, the youth extremist activities, the role of nation and the intellectuals in society, and the perception of contradictory opinions on the tactics of the revolutionary struggle. Novels dedicated to March 12 events caught a big attention and became popular in their times. These novels had an important impact in the collective memory of such a stormy period in Turkish history, when leftist journalists, academics, politicians, writers, university students and activists suffered persecutions, meanwhile thousands were imprisoned and tortured. Despite the fact that the novels gained so much popularity, they still have hardly been accepted as sources of history. Furthermore, they are often classified as literary low-quality ones until now.

The third subchapter analyses the novels "You're wounded" by Erdal Oz and "Alienated" by Mehmet Eroğlu.

The third chapter of the dissertation includes three subchapters. The first of them defines the bloodiest period in the history of Turkish republic, the preconditions of a military coup, studies its causes and consequences. The second subchapter presents the subgenre peculiarities for the "September 12 novel" in

comparison with literature of the previous decade. Such form of novel was mostly left-wing in ideology and its themes were the same - the main features of revolutionaries' lifestyle, the reflection of the period's psychological atmosphere, the political participation of working class and leftist political organizations, social changes after 1980 coup, the place of women activists in political organizations. But the "September 12 novels" obtained features specific of different characters and literary techniques. Great attention was given to the emotional and psychological clashes had taken place between the sensitive man and the robot, the deadlocks of individual mind. This subchapter examines also the main causes of decline in the tradition of political novel, accepting them through the prism of the obvious impacts of global literary developments. The third subchapter is dedicated to the investigation of literary style in "The Wedding Night" by Adalet Agaoğlu and "The Silent House" by Orhan Pamuk.

In the Conclusion we have resumed general resolutions and remarks of the research.